ՎԱՂԱՐՇԱՊԱՏԻ Մ.ԳՈՐԿՈՒ ԱՆՎԱՆ N 5 ԱՎԱԳ ԴՊՐՈՑ

ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՈՒՄ

Ավարտական հետազոտական աշխատանք

Թեման- Ստեղծագործական և հետազոտական աշխատանքի կարևորությունը երաժշտության դասին՝ այլընտրանքային ճանապարհով գիտելիքների պաշարի կուտակման համատեքստում

Մասնակից՝ Անահիտ Աղաջանյան

Դպրոց՝ «Ոսկեհատի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ

Վերապատրաստող՝ Անահիտ Կոշկարյան

Վաղարշապատ 2022թ.

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Ներածություն կամ մուտքի զրույց.....3

Գրականության ակնարկ.....6

Գործնական համատեքստ.....13

Հետազոտության ընթացք.....18

Ամփոփում.....31

Գրականության ցանկ.....32

Ներածություն կամ մուտքի զրույց

Ժամանակակից հարափոխ աշխարհում կատարվող ցանկացած իրադարձություն ալիքի պես փոխանցվում է աշխարհի մի ծայրից մյուսը՝ տնտեսական, քաղաքական, ժողովրդագրական և մշակութային կառուցվածքներ փոփոխելով: Այն, ինչ մի ժամանակ թվում էր անփոփոխ ճշմարտություն, այսօր դարձել է հարաբերական, երբեմն էլ՝ սխալ: Ուստի նորօրյա դպրոցի ուսուցչին անհրաժեշտ է ոչ միայն դասավանդվող առարկայի խոր և բազմակողմանի իմացություն, այլև դասավանդման նպատակների, խնդիրների, դրանց կենսագործմանը ուղղված եղանակների, ձևերի և միջոցների նպատակահարմար ընտրություն կատարելու կարողունակություն:

Դասավանդման կարևոր հիմնախնդիրներից առաջինը՝ ինչ սովորեցնելը, ծրագրային նյութի միջոցով իբրև ճանաչողական-իմացական արժեք՝ գիտելիք, մատուցվում է սովորողներին: Երկրորդը՝ ինչու սովորեցնելը, կրթության բովանդակությունը կազմող կարողություններ, հմտություններ և արժեքային համակարգ բաղադրիչների միջոցով շեշտադրում է ինչ սովորեցնելու նպատակը, իսկ երրորդը՝ ինչպես սովորեցնելը, պայմանավորվում է դասավանդման կերպը՝ եղանակը, միջոցներն ու ձևերը:

«Աշխարհը բարելավելու համար հարկավոր է շրջվել դեպի դրական կրթական մեթոդներ: Այն պահից, երբ բացահայտվեն առավել արդյունավետ մեթոդները, կրթությունը կդառնա գրեթե միակ համապատասխան բնագավառը, որը կարող է բարելավել կյանքը»:

Բ.Ֆ. Սքիներ

Երաժշտությունը մարդուն դաստիարակելու ամենահզոր և ամենավառ միջոցներից մեկն է: Երաժշտությունը, երգերը կարող են ավելի լավ արտահայտել մարդու զգացմունքները, քան բառերով և ժեստերով՝ առավել թաքնված խորը հոգեկան վիճակները՝ հրճվանք, անհանգստություն, տխրություն, հույս, ուրախություն, քնքշություն, երախտագիտություն, տագնապ, հաղթություն: Յուրաքանչյուր դարաշրջան ունի իր սեփական մեթոդները, ստեղծագործության գեղարվեստական աշխարհը կառուցելու իր սեփական ձևերն ու տարբերակները, և անձը իր հույզերով և զգացմունքներով ներկայացնելու

ուղիները: Կրթության օղակում երաժշտական արվեստը այն միջոցներից մեկն է, որը նպաստում է երեխաների հոգևոր և բարոյական հատկությունների ձևավորմանը և զարգացմանը, քանի որ այն ամբողջությամբ արտացոլում է աշխարհը ամբողջության և գեղեցկության մեջ և միտված է, նախևառաջ, բացահայտելու մարդու ներքին աշխարհը, նրա իդեալները, կյանքի արժեքները: «Երաժշտություն» առարկան արթնացնում է տարատեսակ զգացողություններ երեխաների մեջ՝ սկսած հասարակ ուրախություններից մինչև հայրենիքի նկատմամբ անսահմանը սերը, այն օգնում է ձևավորել իդեալներ և ազդում է մարդու վարքի վրա: Երաժշտությունն ու երգարվեստը անմիջական բարոյական և կրթական արժեք ունեն երեխաների համար, քանի որ դրանք միավորում են հոգևոր, հերոսական, քնարական զգացմունքները: Ուսումնական ծրագրով երեխաների համար ամենամոտ և հասկանալի կոմպոզիտորներից են Կոմիտասը, Ա. Խաչատրյանը, Մ. Մազմանյանը, Պ.Ի. Չայկովսկին, Ս. Պրոկոֆևը և այլն: Այս կոմպոզիտորների աշխատանքների վառ առանձահատկությունները խորապես տպավորվում են երեխաների գիտակցության մեջ: Երեխաները երաժշտության հետը շփվում են թե՛ դպրոցում և թե՛ դպրոցից դուրս, ուստի ուսուցչի առջև խնդիր է դրված ուղղորդել երեխային այնպես, որոնի ուսուցման այնպիսի ճանապարհներ, որոնք կօգնեն երեխային ճիշտ ընկալելու երաժշտությունը:

«Երաժշտություն լսելը և հասկանալը գեղագիտական մշակույթի կարևոր տարրերից է, առանց որի հնարավոր չէ պատկերացնել դաստիարակության լիարժեքությունը»,- գրել է Վ.Ա. Սուխոմլինսկին: Նա երաժշտությունը համարել է գեղագիտական դաստիարակության հզոր միջոց:

Թեմայի արդիականությունը կայանում է ուսուցիչ-աշակերտ փոխհարաբերությունները նույն հարթակի վրա դնելու մեջ, նրանց երկխոսության մեջ, որտեղ պետք է ուսուցիչը և աշակերտը խոսեն նույն լեզվով: Ինչպես ասում էր մեծն Կոմիտասը՝ եթե մանուկը չի հասկանար ձեր դաստիարակությունը, հանցանքը ձերն է, որովհետև չեք կրցած հասկանալ անոր հոգին, պետք է իջնել մինչև անոր հոգեկան աստիճանը և զայն առնելով ձեզի հետ՝ բարձրանալ: Սխալ դաստիարակության արդյունք է, որ շատերը, որոնք հանճար պիտի ըլլային, եղած են գողեր:

Թեմայի արդիականությունը կայանում է նաև ժամանակակից դպրոցականների ուսումնական պրոցեսը ավելի արդյունավետ դարձնելու

մեջ: Աշակերտներին մոտիվացնելու, երաժշտական ունակությունները, ստեղծագործական ունակությունները զարգացնելու մեջ:

Աշխատանքի նպատակն է՝

- Հետաքրքրացնել ուսումնական պրոցեսը այլընտրանքային ճանապարհով, որը կօգնի էլ ավելի արդյունավետ դարձնել դասը:
- Իրականացնել հիմնախնդրի շուրջ մասնագիտական վերլուծություն:
- Ներկայացնել այլընտրանքային ճանապարհները ուսումնական գործընթացում:
- Ուսումնական ընթացքը դարձնել բազմաբնույթ և բազմազան տարատեսակ մեթոդներով, որոնք կօգնեն ակտիվացնել աշակերտների մտածելու կարողունակությունները:

Խնդիրները՝

- Զարգացնել աշակերտների ստեղծագործական կարողունակությունները:
- Զարգացնել աշակերտների ինքնուրույն գործելու ունակությունները:
- Աշակերտների մեջ բացահայտել նրանց զգացմունքներն ու ուղղորդել դրանք:

Գրականության ակնարկ

««Բառին ազատ տիրապետելը՝ բոլորին» նշանաբանը լավ, դիմացկուն ժողովրդավարական հնչեղություն ունի: Ոչ նրա համար, որ բոլորը արվեստագետներ դառնան, այլ որպեսզի ոչ ոք ստրուկ չլինի»

Ջ. Ռոդարի

Զարմանալի է մանկավարժական տեսությունների հիմնախնդիրների, մանկավարժության պատմության ճանաչված անունների կողքին որպես մանկագիր հանրաճանաչ Ջաննի Ռոդարի անվանը հանդիպելը: Ռոդարին ստեղծագործական անձնավորության զարգացման խնդիրներով լրջորեն է զբաղվել: Նա տարբեր գիտնականների (հատկապես Լ. Վիգոտսկու և Ջ. Դյուիի) այդ ասպարեզում արված ծանրակշիռ հետազոտություններն ուշադիր զննել է, ուսումնասիրել, դրանք յուրատեսակ փորձարարական քննության ենթարկել մանկական լսարանում՝ հազիվ քայլող մանուկներից սկսած ու բարձր դասարանցիներով վերջացրած՝ փորձելով օգնել բոլոր նրանց, ում համար երախաները թանկ են: Կարևորելով ստեղծագործծական երևակայության դերը՝ Ռոդարին այն խթանելու հնարների զինանոց և այդ հնարների լայն տարածման միջոցներ է մշակել: Նրա մանկավարժական մտքերը, դիտարկումներն արձանագրված են «Ստեղծագործական երևակայության քերականություն» վերտառությամբ տրակտատում:

- «Ստեղծագործական երևակայության քերականության» հիմքում դրված է այն պարզ գաղափարը, որ ստեղծագործական երևակայությունը մի քանի աչքի ընկնող անհատների մենաշնորհը չէ, որ դրանով բոլորն են օժտված:

Նա գտնում է, որ «պատահաբար մարդու գլուխը մտած բառը լայնությամբ ու խորությամբ ալիքներ է տարածում, հազադեցությունների անվերջ շղթա արթնացնում՝ հնչյուններ և կերպարներ, զուգորդություններ և հիշողություններ, պատկերացումներ և երազանքներ մեջտեղ բերելով: Այս գործընթացը փորձի և հիշողության, երևակայության և ենթագիտակցականի հետ սերտորեն կապված է և նրանով է կարևոր, որ ուղեղը կրավորական (պասիվ) չի մնում, անընդհատ միջամտում է, հսկում, ընդունում կա մերժում, ստեղծում կամ քանդում»:

Ռոդարին համոզված է, որ եթե ցանկանում եք մտածել սովորեցնել, ապա նախ և առաջ պետք է հորինել սովորեցնեք: Որ երեխայի՝ պատմություն հորինելը ստեղծագործական գործողություն է և միաժամանակ գեղագիտական կողմ ունի: Թե՛ մեկ աշակերտը, թե՛ ամբողջ դասարանը կարող են պատմություն հորինել, այն բեմադրել կամ տիկնիկային ներկայացման հիմք դարձնել, որպես կոմիքս կամ կինոնկար զարգացնել, ձայնագրել, տեսագրել և այլն: Կարճ ասած՝ սա տեխնիկա է, որը մանկական ցանկացած խաղի հիմքում կարող է դրվել:

Հետևողականորեն զարգացնելով խաղալով սովորեցնելու, խաղի հնարավորությունները մանկավարժական գործին լայնորեն ի սպաս դնելու անհրաժեշտությունը՝ Ռոդարին խաղեր է օգտագործել՝ ժողովրդականից մինչև նկարիչ-սյուրռեալիստների կիրառածները՝ միշտ ելնելով նրանից, որ վերջնական արդյունքը խաղացողներին շատ ավելի քիչ է հետաքրքրում, քան բուն խաղը, պայքարը, որն առաջանում է օտար ձևերին տիրելու և իրենը թելադրելու փորձից, քան ամեն քայլափոխի հանիպող անակնկալները: Ռոդարին զբաղվել է երեխայի, պատանու երևակայության զարգացմանը, ակտիվացմանը նպաստող մեթոդներով, հնարներով: Նա գտնում է, որ երեխաներին ամենաանհեթեթ ու անսպասելի հարցերն են ամենից շատ հետաքրքրում հենց այն պատճառով, որ հետագա աշխատանքը՝ թեմայի զարգացումը, արդեն արված հայտնագործության ըմբռնումը և շարունակությունն է: «Աշխարհին կարելի է ուղիղ, բայցև անդրամպային բարձունքից նայել (ինքնաթիռների դարում դա դժվար չէ): Իրականության մեջ կարելի է շքամուտքից մտնել, բայց կարելի է և օդանցքերից սողոսկել, որն անհամեմատ ավելի զվարճալի է»[1]:

Ռոդարիի բոլոր մեթոդները, մեթոդական հնարները միաժամանակ ելնում են նրանից, որ ձանձրույթը մտքի թշնամին է: Նա համոզված է, որ բոլոր աշխատանքները պետք է ստեղծագործական մթնոլորտում, երեխայի բնականոն զարգացման միջավայրում ընթանան՝ միաժամանակ դրա ստեղծմանը նպաստելով: Ռոդարին երեխայի և նրա ծնողների, մերձավորների համատեղ խաղերը, համատեղ գործունեությունը շատ է կարևորում, դրա բազմաթիվ ձևեր է առաջարկում՝ խորհուրդ տալով ոչ թե խրատել, ոչ թե սովորեցնել, այլ երեխայի հետ խաղալ և ստեղծագործորեն երևակայել, հեքիաթներ, բանաստեղծություններ, հանելուկներ ու պատմություններ հորինել: Եվ միանգամայն բնական է, որ ամենայն

[1] Ջ. Ռոդարի, Ստեղծագործական երևակայության քերականություն, Երևան, 1995

լրջությամբ անդրադառնում է հեքիաթներին՝ որպես երեխայի մտավոր, խոսքային-ստեղծագործական մտածողության զարգացման, աշխարհաճանաչողության միջոցի: «Բազմիցս ասվել է, որ հեքիաթը բնավորությունների և ճակատագրերի ծով է, որից երեխան իրեն դեռևս անծանոթ իրականության, ապագայի գծերի մասին (որի շուրջ դեռևս չի կարող խորհրդածել) տեղեկություններ է ստանում: Ուրիշ, դարձյալ ճիշտ բան էլ էր ասվում, որ հեքիաթներն ավելի հաճախ հնաոճ, հետամնաց մշակութային մոդելներ են արտացոլում այն սոցիալական իրականության ու տեխնիկական նվաճումների համար, որոնց հետ երեխան մեծանալուց հետո է առնչվելու: Սակայն այս առարկությունները կվերանան, եթե նկատի ունենանք, որ հեքիաթները երեխայի համար յուրահատուկ աշխարհ են ստեղծում, մեզանից ամուր վարագուրված ինչ-որ թատրոնում»: Աշխարհ ոչ թե կրկնօրինակելու, այլ դիտելու համար: Բայց ակտիվ դիտման համար, երբ առաջին պլան են մղվում ոչ այնքան հեքիաթի բովանդակությունը, որքան ունկնդրի շահերը: Հատկանշական է, որ երբ մանկությունն իրատեսական շրջան է թևակոխում, երբ ամենից շատ բովանդակությունն է կարևորվում, հեքիաթը երեխային դադարում է հետաքրքրել, և դա հենց այն պատճառով է տեղի ունենում, որ դրա «ձևերն» այլևս դրա կենսագործունեության համար հումք չեն[2]»:

Ռոդարին վստահ է, որ երեխայի համար հեքիաթը խաղի պես լուրջ և իսկական գործ է. դա նրան պետք է կողմնորոշվելու, իրեն ուսումնասիրելու, իր հնարավորությունները չափելու, գնահատելու համար:

> «Այն իրողության գիտակցումը, որ յուրաքանչյուր անհատ կարող է իրեն դրսևորել միանգամայն տարբեր բնագավառներում, և որ մի բնագավառում դրսևորած ընդունակություններն ամենևին էլ չեն բացառում մեկ այլ բնագավառում ուժեղ կամ թույլ լինելը. զգալի առաջընթաց է և մերժում է տարածված այն կարծիքը, թե մարդն ի ծնե «խելոք» կամ «հիմար» է լինում»
>
> ***Հ. Գարդներ***

Որպես մանկավարժ-հոգեբան՝ Հովարդ Գարդները առավել ճանաչված է իր բազմաբնույթ մտածողության տեսությամբ (Theory of Multiple

[2] Ջ. Ռոդարի, Ստեղծագործական երևակայության քերականություն, Երևան, 1995, էջ 162

intelligences) /ԲՄ/[3]: Գարդներին չէր բավարարում թեստերի միջոցով մարդու մասին տեղեկություններ ստանալու ընդունված ճանապարհը: Դրա փոխարեն նա փնտրում է այն տեղեկությունների ձեռքբերման առավել բնականոն աղբյուր: Գարդների նպատակն է պատասխանել այն հարցին, թե «որո՞նք են այդ ճանաչողական կարողությունները, որ վերջ ի վերջո հնարավորություն են տալիս մարդուն իրականացնել իր դերը կյանքում»: Այս հարցի պատասխանը գտնելու համար Գարդները կարդում է հսկայական քանակությամբ գիտական գրականություն՝ փնտրելով մտածողության համար համապատասպան բնորոշումներ: Նա գտավ, որ մտածողության բնորոշումները պետք է հիմնականում, եթե ոչ ամբողջովին, համապատասխանեն իր մշակած 8 չափանիշներին:

- Մտածողություն կարելի է գտնել մեկուսացման մեջ գտնվող մտավոր արատներ ունեցողների շրջանում:
- Մտածողությունը դիտարկվում է հարաբերական մեկուսացման մեջ գտնվող օժտված մարդանց, արվեստագետների կամ այլ բացառիկ անձանց շրջանում:
- Մտածողությունը չունի զարգացման հստակ ուղեգիծ (օրինակ՝ նորածնից մինչև մեծահասակ դառնալու ընթացքում նրանց երաժշտական, լեզվական և միջանձնային կարողությունները համաչափ են զարգանում):
- Մտածողությունը պետք է համապատասխանի իրականությանը բնական էվոլուցիայի տեսանկյունից, այսինքն՝ այն անհրաժեշտ է մարդկության և այլ կաթնասունների համար:
- Մտածողությունը պետք է կոդավորվի սիմվոլների (ազդանշանների) համակարգում:

Հովարդ Գարդների բազմաբնույթ մտածողության տեսությունը միանշանակ չընդունվեց ակադեմիական հոգեբանության կողմից, սակայն բազմաթիվ մանկավարժներ բարձր գնահատեցին այն: Այն ընդունվեց տեսաբան մանկավարժների կողմից, և լայն կիրառություն գտավ ուսուցիչների և վարչական աշխատողների շրջանում: Հ. Գարդների տեսությունն իր կիրառությունը գտավ տարբեր տարիքային խմբերում՝ նախադպրոցական, տարրական, միջին, ավագ դպրոցական, ինչպես նաև միջին մասնագիտական և բարձրագույն ուսումնական հաստատություններում: Գարդների բազմաբնույթ մտածողության

[3] Հովարդ Գարդներ. «Գիտակցության կառուցվածքը», 1983

տեսության առաջնային հիմնադրույթն այն է, որ բոլոր մարդիկ ի ծնե օժտված են, և որ մարդկանց հատուկ են ընկալման, մտածողության բոլոր ձևերը, սակայն տարբեր մարդկանց մոտ դրանցից մեկ կամ մի քանիսը լինում են առավել ընդգծված, առավել շեշտված: Հետևաբաև ուսուցումը պետք է կազմակերպել այնպես, որ այն ինչ-որ չափով համահունչ լինի նրանց բազմապիսի ընդունակություններին:

Այս տեսությունը փորձում է լուծել կրթական համակարգի մի շարք հիմնախնդիրներ՝

- Ուսուցումը դարձնել դյուրին և հետաքրքիր:
- Ձևավորել ուսուցման դրական շարժառիթներ:
- Յուրաքանչյուր աշակերտի համար սովորելը դարձնել ավելի մատչելի, արդյունավետ և ստեղծագործական գործընթաց:
- Հնարավորություն տալ մտածել և սովորել բազմաբնույթ ճանապարհներով:
- Սովորողներին հնարավորություն տալ յուրացնելու ուսումնական նյութը իր համար առավել հարմար եղանակով:
- Հնարավորություն տալ ուսուցիչներին կարևորելու խորությունը ծավալի փոխարեն:
- Կատարելագործել և ընդլայնել ուսուցման եղանակների ու մեթոդների բազմազանությունը:
- Խթան հանդիսանալ ուսուցման նոր մոտեցումների ձևավորման համար, որոնք կարող են առավելագույնս բավարարել սովորողների կարիքները:

Ըստ Հ. Գարդների՝ մարդու բոլոր յոթ մտածողություններն անհրաժեշտ են կյանքում: Հետևաբար ուսուցիչները պետք է հենվեն նրանցից յուրաքանչյուրի վրա և ոչ թե միայն առաջին երկուսի, որոնք առավել ընդունված են ավանդական դպրոցում: «Հուսանք,- գրում է Գարդները,- որ մոտ ապագայում կստեղծվի մանկավարժական այնպիսի մթնոլորտ, որ առավելագույնս կհամապատասխանի յուրաքանչյուր սովորողի հնարավորություններին և տվյալ պատմական ժամանակաշրջանին»[4]:

Երաժշտական մտածողությունը ներառում է երաժշտական գործինքների վրա նվագելու, ստեղծագործելու և երաժշտության գնահատման կարողությունները: Այն հնարավորություն է տալիս ճանաչել

[4] Hovard Gardner “Multiple intellgences the thedry in practice”, 1993

և ստեղծագործել երաժշտական ձայներ, տոներ և ռիթմեր: Ըստ Գարդների՝ երաժշտական մտողծողությունը գրեթե զուգահեռ է զարգանում լեզվական մտածողության հետ: Երաժշտական մտածողությունը (ինչպես նաև տարածական մտածողությունը) մեծ ընդհանրություն ունի և կապված է նաև ներանձնային մտածողության հետ, որի հիմքում ընկած են անձի զգացմունքները: Բնական է, որ երաժշտությունը կարող է միջոց ծառայել մեր սեփական զգացմունքները արտահայտելու համար:

Ուսումնասիրելով Հ. Գարդների բազմաբնույթ մտածողության տեսությունը՝ ամերիկացի մանկավարժ Քեյթ Ռոջերը առանձնացրել է մարդու բազմաբնույթ մտածողության հետևյալ սկզբունքները[5]՝

- Մտածողությունը եզակի չէ, այլ բազմաբնույթ:
- Յուրաքանչյուր մարդ ունի մտածողության իր սեփական, բացառիկ կառույցը:
- Մարդու մտածողության տեսակները մշտապես գտնվում են զարգացման և փոփոխության մեջ:
- Մտածողության բոլոր տեսակներն ունեն շարժուն (դինամիկ) բնույթ:
- Բազմաբնույթ մտածողության տեսակները կարող են տարբերակվել և նկարագրվել:
- Ամեն ոք կարող է հայտնաբերել և զարգացնել իր մտածողության բազմազանությունը:
- Մտածողության մի տեսակի օգտագործումը կարող է խթանել այլ տեսակների զարգացումը:
- Անձնական փորձն ու նպատակասլաց աշխատանքը կարող են զարգացնել անձի մտածողության ողջ սպեկտրը:
- Մտածողության բազմազանությունն ավելի հումանիստական է դարձնում անձի ներուժը, նրա հնարավորություններն ու ընդունակությունները (անկախ տարիքից):
- Որքան ավելի խորն ենք ուսումնասիրում մարդու բազմաբնույթ մտածողությունը, այնքան ավելի է փոփոխվում այդ մտածողությունների տեսակների ցանկը:

Գարդները նշում է, որ չի կարելի հավասարության նշան դնել մտածողության և գիտելիքի միջև: Այնուհանդերձ դրանք ունեն շատ ընդհանրություններ և կապված են միմյանց հետ: Հենց ստացած

[5] Hovard Gardner “Multiple intellgences the thedry in practice”, 1983

տեղեկատվությունը ընկալելու, ըմբռնելու ձևով էլ մարդիկ տարբերվում են իրարից:

Ես, ուսումնասիրելով Հ. Գարդների «Բազմաբնույթ մտածողության տեսությունը» և Ջ. Ռոդարիի «Ստեղծագործական երևակայության քերականությունը», եկա այն եզրահանգման, որ պետք չէ սահմանափակել աշակերտներին, հատկապես երաժշտության դասերին և, իհարկե, ուսուցիչը պետք է տա նրանց ինքնուրույն մտածելու հնարավորություն, կոլեկտիվում աշխատելու կարողունակություն, ստեղծագործելու և սեփական գործողությունը, աշխատանքը պլանավորելու կարողունակություն:

Գործնական համատեքստ

Երաժշտության ուսուցիչը համակողմանի գիտելիքներ ունենալուց բացի պետք է լավ տիրապետի երաժշտության դասավանդման տեսությանը և մեթոդիկային, լավ իմանա ընդհանուր հոգեբանություն և տարիքային մանկավարժություն, երաժշտական գեղագիտություն: Նա պետք է անընդմեջ կատարելագործի իր մասնագիտական պատրաստվածությունը, ծանոթ լինի երաժշտական դաստիարակության ասպարեզում մարդկության կողմից ձեռք բերած լավագույն փորձին: Ուսուցիչը պետք է ստեղծագործական մոտեցում ցուցաբերի իր առարկայի նկատմամբ, խուսափի միօրինակությունից, ստեղծի այլընտրանքային իրավիճակներ, օգտագործի ուսուցման նորագույն տեխնոլոգիաներ, ինտերակտիվ մեթոդներ, երաժշտության դասը դարձնի հետաքրքիր ու արդյունավետ: Երաժշտության դասին աշակերտները կատարում են երաժշտառիթմական վարժություններ, որոնց միջոցով զարգանում են նրանց ընկալումը, ուշադրությունը, հիշողությունը:

- Խոսքը, մտածողությունը, երևակայությունը զարգացնելու համար աշակերտներն ունկնդրում են երաժշտական ստեղծագործություններ տարբեր ժամանակաշրջանների և ժանրերի:
- Զարգացնում են վոկալ և երգչախմբային հմտություններ, ռիթմի զգացողություն:
- Հարստանում է նրանց հոգևոր աշխարհը, երեխաների մեջ դաստիարակվում է երաժշտական, գեղարվեստական և գեղագիտական ճաշակ, զարգանում է նրանց ճանաչողական հետաքրքրությունը առարկայի նկատմամբ:
- Երեխաները սովորում են պլանավորել իրենց նպատակներին հասնելու ուղիներ:
- Պատկերացում են կազմում բովանդակության, ձևերի, լեզվի մասին, երաժշտական ժանրերի մասին:
- Ձեռք բերած գիտելիքները կիրառում են երաժշտության և արվեստի այլ տեսակների մասին հետազոտական աշխատանքների և նախագծային աշխատանքների մեջ:

Այսպիսով, երաժշտության դասի առանձնահատկությունը ստիպում է ուսուցչին հաշվի առնել աշակերտի ոչ միայն կարողունակությունները, որոնք առավել ակնհայտ են երաժշտական գործունեության արդյունքներում, այլև հատկապես կարևոր է դասին երեխաների ոգևորությունը, երաժշտության նկատմամբ հետաքրքրությունը, հուզական արձագանքը, երևակայությունը, որը կարևոր է աշակերտի գործունեության բոլոր փուլերում և վկայում է երաժշտության ազդեցության մասին երեխայի ներաշխարհի վրա:

Երեխայի ճանաչողական կարողունակությունները նրա գործողությունների հիմնական ձևերից են, որը ձևավորվելով վերածվում է ուսուցողականի: Ուսուցչի գլխավոր խնդիրն է՝

- Երեխայի մեջ ձևավորել հետաքրքրություն ուսման նկատմամբ:
- Ձևավորել կամքի ուժ, ուղղորդել զգացմունքները:
- Ձևավորել ինքնուրույն մտածելու ու գործելու կարողունակություն:
- Դաստիարակել այնպիսի համոզմունքներ, որ աշխարհը գեղեցիկ է իր բոլոր երևույթներով, նույնիսկ ամենասովորականով, որոնց հետ նրանք առնչվում են ամեն տեղ ու ամեն օր:
- Երեխաների մեջ արթնացնել ամեն օր նորը սովորելու և ավելի շատ իմանալու ցանկություն:
- Արդեն իմացածի մեջ նորը հայտնաբերելու կարողունակություն:

Ուսուցման հիմնական ձևը դասն է, որը շատ արդյունավետ է և իրեն արդարացնում է արդեն մի քանի հարյուր տարիներ: Դա ձև է, որը օգնում է ուսուցչին լուծելու ուսուցողական և կրթական խնդիրներ: Ինչպես ասել է Վերզիլին՝ դասը արև է, որի շուրջ ինչպես մոլորակներ պտտվում են ուսուցման բոլոր տեսակները:

Ավանդական ուսուցման ձևերը մի տեսակ նեղ են և ընդարձակվելու պահանջ ունեն: Երաժշտության դասերը պետք է ձգտել էլ ավելի վառ ու էմոցիոնալ դարձնել, պետք է ներկայացվող նյութը հասցնել յուրաքանչյուրին՝ հենվելով ստեղծագործական պրոցեսի վրա: Հենց այդ դեպքում է սովորաբար առաջանում այլընտրանքային ուսուցման պահանջ: Այլընտրանքային ճանապարհներով դասերը ոչ սովորական են: Ասելով ոչ սովորական՝ նկատի ունենք դասապրոցեսի կազմակերպում սովորականից դուրս՝ ուսումնական ծրագրի պահպանմամբ: Այսինքն՝ դասերը անց են կացվում նույն ժամանակային հատվածում և նույն աշակերտների համար, ինչպես ընդունված դասին, բայց այսպիսի դասերի

ոչ սովորական լինելը կայանում է դասի կառուցվածքի և վարման մեջ, որը հիմնվում է աշակերտների ստեղծագործական կարողությունների և ուսուցչի հնարամտության վրա:

Այլընտրանքային ճանապարհով դասերը ուսուցման կարևոր ձևերից են, որովհետև այդպիսի դասերը օգնում են ձևավորել ուսումնական գործունեության հմտություններ և աշակերտների վրա ունենում են էմոցիոնալ ազդեցություն, որի շնորհիվ երեխաները ստանում են էլ ավելի խոր և կայուն գիտելիքներ: Այդպիսի դասերի ներգրավումը ստեղծում է բարենպաստ պայմաններ խմբային աշխատանքներ կազմակերպելու համար, օգնում են երեխաների մոտ ձևավորել այնպիսի հատկություններ, ինչպիսիք են ինքնուրույնությունը, կոլեկտիվում աշխատելու կարողությունը, զարգանում է ստեղծագործական և կազմակերպչական կարողությունը, տեսնելու սեփական ձեռքբերումները և բացթողումները, սեփական աշխատանքի հետևանքի արդյունքներով պատասխանատվությունը, բարձրացնում է աշակերտի հետաքրքրությունը դասի նկատմամբ: Սովորական դասի ընթացքում սովորողները պետք է ստանան ոչ սովորական հանձնարարություններ: Նպատակն է՝

- Մաքսիմալ ապահովել աշակերտների ներգրավվածությունը դասին:
- Դասի նպատակը չլինի ուղղակի հրճվելն ու ուրախանալը, այլ լինի ուսուցանող և ներգրավող:
- Պետք է հասնել շատ և ալտերնատիվ մտքերի արտահայտմանը:
- Պետք է զարգացնել աշակերտների փոխըմբռնման կարողությունները:

Ուսուցիչը պետք է հարգանք ցուցաբերի ոչ միայն երեխայի գիտեցածի հանդեպ, այլև չիմացածի:

Առանձնացնենք այլընտրանքային ճանապարհով դասընթացի մի քանի խմբեր՝

- Խաղերի և մրցույթների միջոցով դասեր՝ մրցույթներ, երաժշտառիթմական էստաֆետներ, մենամարտեր, դերային խաղեր, վիկտորինաներ:
- Դասեր-հետազոտություններ, հայտնագործություններ, հիմնախնդրի ուսումնասիրություններ և վերլուծություններ, կոմենտարյաներ, ռեպորտաժներ, երկխոսություններ:

- Դասեր, որոնք հիշեցնում են հասարակական շփման ձևեր՝ պրես-կոնֆերանսներ, դիսկուսիաներ, հեռուստահաղորդումներ, հեռուստակամուրջ, քննարկումներ:
- Դասեր՝ հիմնված երևակայության և ստեղծագործական կարողությունների վրա՝ դաս-հեքիաթ, դաս-անակնկալ, դաս-ճանապարհորդություն:
- Դաս-դատ, հետախուզություն, գիտական խորհուրդ:
- Դաս-համերգ, թատերականացված դասեր և այլն:

Երաժշտության դասը ներառում է երաժշտական ամենատարբեր գործողություններ: Ըստ իս՝ երաժշտության դասերը արդեն ինքնին այլընտրանքային են և տարբերվում են մյուս դասերից:

Ա.Ս.Մակարենկոն ժամանակին գրել է. «Ես, որպես մանկավարժ, պարտավոր եմ նրանց հետ խաղալ: Եթե ես միայն վարժեցնեմ և պահանջեմ, ապա կլինեմ օտար ուժ, միգուցե և օգտակար, բայց ոչ մտերիմ: Ես պետք է անպայման մի քիչ խաղամ: Եվ ես այդ եմ պահանջել իմ բոլոր գործընկերներից»: Հետևելով Մակարենկոյի ասածին՝ ես նույնպես որոշ դասեր վերածեցի խաղի՝ իմ առջև նպատակ դնելով՝

- Ձևավորել երեխաների մեջ ինքնուրույնություն, ստեղծագործական մտածողություն:
- Դասերից ստացած գիտելիքները կիրառելու կարողունակություններ:
- Զարգացնել երեխաների մեջ մանկական և բնական նվագարաններով նվագելու կարողությունը:
- Զարգացնել աշակերտների մեջ խմբում ճիշտ և մաքուր, միասնական, համահունչ երգելու, միմյանց լսելու ու ընկալելու կարողությունը:

Այսպիսի պարապմունքները մոտեցնում են դպրոցական ուսուցումը կյանքին, իրականությանը: Երեխաները հաճույքով են մասնակցում այն դասերին, որտեղ ոչ միայն գիտելիքներ են հարկավոր, այլ նաև հնարամտություն և ստեղծագործական կարողություն:

Այլընտրական ճանապարհով դասերի հատկանիշներն են՝

- ժամանակային սահմանափակումների փոփոխությունը
- պարապմունքները անց են կացվում այլընտրանքային վայրում կամ հետաքրքիր ձևավորված դասասենյակում: Դա կարող է լինել որևէ այլ վայր դպրոցից դուրս՝ բնության գրկում, թանգարանում և այլն

- օգտագործվում են ոչ ստանդարտ երաժշտական գործիքներ (շշեր, գդալներ, խաղալիքներ, ցնցուղներ, տարբեր գույներով սուլիչներ և այլն)
- կազմակերպվում են կոլեկտիվ գործողություններ՝ մեկ այլ աշակերտի կամ ուսուցչի հետ համագործակցելով
- դասավարման ընթացքում երաժշտությունը ունկնդրում են, համակարգիչներ, ֆիլներ, մուլտֆիլմեր:

Այսպիսի դաս ընտրելիս ուսուցիչը պարտավոր է հաշվի առնել իր իսկ բնավորության առանձնահատկությունները, և՛ դասարանի, և՛ առանձին աշակերտների առանձնահատկությունները:

Պետք է առաջնորդվել «երեխաների հետ, երեխաների համար» ասույթով, որը կիրականացվի բարության, սիրո, ուրախության և ստեղծագործական միջավայրում:

Հետազոտության ընթացք

Միջին և տարրական դպրոցականների երաժշտական կրթության խաղային տեխնոլոգիաների օգտագործումը

Երաժշտության այսպիսի դասերի միջոցով ուսուցիչը կարող է զագացնել 6-ից մինչև 13-14 տարեկան աշակերտների գեղագիտական ճաշակը, երբ աշակերտները դեռևս չեն դադարում երեխա լինելուց: Նրանք պարզ են, միամիտ, սիրում են խաղալ, երգել, հետաքրքրասեր են ու պրպտող, լի են հավատքով դեպի լուսավոր ապագան: Շատ կարևոր է այս բոլոր հատկությունները պահպանել աշակերտների մեջ, դրան զուգահեռ դաստիարակել բարձր գեղագիտական ճաշակ: Պետք է կարողանալ կազմակերպել դասը այնպես, որ դեռահասները կարողանան հեշտ յուրացնել այն՝ միաժամանակ լինելով ակտիվ մասնակիցներ: Մեզ հայտնի ավանդական դասի ժամանակ աշակերտները ունկնդրում են երաժշտական ստեղծագործություններ, նվագում պարզ նվագարաններով, շարժվում երաժշտությանը համապատասխան, կատարում իմպրովիզացիաներ: Այս բոլոր ձևերը միշտ եղել են ու կլինեն երաժշտական դասավանդման հիմնական ձևերը: Սակայն աշակերտների մտածողությունը, ինքնուրույնությունը, ստեղծագործական միտքը, աշխարհայացքը, խմբում աշխատելու ունակությունը, միջանձնային հարաբերություններ ձևավորելու կարողությունը: Ապրումակցելու ունակությունը բարձրացնելու համար ուսուցիչը չպետք է բավարարվի ուսուցման ավանդական մեթոդներով և պետք է փնտրի, գտնի ճանապարհներ, որոնց միջոցով դասը կդարձնի էլ ավելի հետաքրքիր և ուսուցողական, դասի ուսուցման արդյունավետությունը բարձրացնի:

Ես, որպես երաժշտության ուսուցիչ, աշխատում եմ դասերը անցկացնել երեխաներին հաճելի և հետաքրքիր տարբերակներով՝ իհարկե պահպանելով ուսուցման ավանդական ձևերը: Իմ առջև նպատակ եմ դրել՝

- Ձևավորել երաժշտական ճաշակ և երաժշտության հետ հաղորդակցվելու պահանջ:
- Ձևավորել և ուղղորդել սովորողներին դեպի արդյունավետ երաժշտաստեղծագործական գործունեություն՝ ունկնդրում, երգեցողություն, երաժշտառիթմական շարժում, իմպրովիզացիա:

- Հետաքրքրացնել ուսումնական պրոցեսը այլընտրանքային ճանապարհներով, որոնք կօգնեն ավելի արդյունավետ դարձնել դասը:
- Բացահայտել և զարգացնել սովորողների երաժշտական ընդունակությունները, երգչային ձայնը, կատարողական, ունկնդրման, մեկնաբանման և սեփական կարծիք հայտնելու հմտությունները, երևակայությունը և ստեղծագործական պատկերացումները:
- Նպաստել ինքնաճանաչմանը և ինքնահաստատմանը:
- Ձևավորել քննական մտածողությունը, սեփական դիրքորոշումը արտահայտելու, մյուսների կարծիքը լսելու և որոշումներ կայացնելու հմտությունը:
- Զարգացնել ազգային երաժշտության գիտակ, ազգային ավանդույթները կրող, պահպանող ու սերունդներին փոխանցող սովորող:
- Զարգացնել աշակերտների ստեղծագործական ունակությունները, մոտիվացնել հաճույքով սովորելուն:

Վերոհիշյալ նպատակների հետ կապված՝ դասընթացի աշխատանքների համար իմ առջև դրել եմ հետևյալ խնդիրները՝

- Բացահայտել տարրական և միջին դպրոցում այլընտրանքային ճանապարհներով երաժշտության դասին ստեղծագործական աշխատանքի կարևորությունը գիտելիքների կուտակման համատեքստում:

Վերջնարդյունք՝

- Կհաղորդակցվի և կինքնարտահայտվի խաղային, հեքիաթային կերպարների, խոսակցական և երաժշտական ինտոնացիաների միջոցով:
- Կբեմականացնի մանկական օպերաներից հատվածներ, հետաքրքիր երաժշտական կերպարներով կներկայացնի կիրառված արտահայտչամիջոցները:
- Կստեղծի երաժշտական նյութին համապատասխան ռիթմական նվագակցություն «բնական» և «այլընտրանքային» նվագարաններով:
- Երաժշտական խաղերի, հեքիաթների, ժողովրդական ծեսերի ուսուցման ընթացքում կստեղծի հետաքրքիր կերպարներ,

արտահայտիչ երգեցողություն, համապատասխան դիմախաղի և դերասանական հնարների միջոցով:

- Կստեղծի փոքրիկ իմպրովիզացիաներ՝ կշարունակի և կավարտի փոքրիկ մեղեդին:
- Կներկայացնի հայ ազգային և այլ ազգերի ժողովրդական կոմպոզիտորական երգեր: Կատարումը կուղեկցի պարային կամ ռիթմական շարժումով:
- Կներկայացնի ստեղծագործության բնույթը, բովանդակությունը, տեսակը, տեմպը, տեմբրը, ռեգիստրը, դինամիկան: Երաժշտությունից ստացած իր տպավորություններն ու զգացողությունները կներկայացնի երաժշտական մասնագիտական եզրույթներով և ներ տեխնոլոգիաներով:
- Ստեղծագործությունից ստացած հույզերը, սեփական զգացողությունները կարտահայտի գույների միջոցով կամ նկարելով: Կմեկնաբանի իր և դասընկերների աշխատանքների լավ և վատ կողմերը, կկատարի ինքնագնահատում և փոխադարձ գնահատում:
- Կբացատրի, թե համացանցը ինչպես է օգնում իրեն ավելի հաճախ և արդյունավետ հաղորդակցվել երաժշտության հետ:

Ես, որպես երաժշտության ուսուցիչ, կարծում եմ, որ երաժշտության բոլոր դասերն էլ տարբերվում են մնացած դասերից և կարելի է ասել, որ այստեղ բոլոր դասերն են այլընտրանքային: Ուսումնասիրում եմ կոլեգաներիս և այլոց դասերը, ինքս էլ ստեղծագործում, հորինում եմ երաժշտական հեքիաթներ, որտեղ օգտագործում եմ նյութը, որը պետք է սովորեցնեմ երեխաներին, կամ հորինում եմ ձևեր, որոնց միջոցով ավելի ըմբռնելի և հիշելի եմ դարձնում թեման: 2-րդ դասարանում հաճախ եմ դիմում խաղերի օգնությանը:

Հիշողությունը զարգացնող խաղի օրինակ

Ես սեղանին եմ դնում տարբեր նվագարաններ՝ իրական և խաղալիք: Աշակերտը մի քանի վայրկյան նայում է նվագարաններին, որից հետո փակում է աչքերը: Թաքցնում եմ մեկ կամ երկու նավագարան, իսկ երեխան, աչքերը բացելով, պետք է կռահի, թե որ նվագարանն է բացակայում սեղանից: Ճիշտ պատասխանելուց հետո պետք է նաև ասի, թե նվագարանը ո՞ր խմբին է պատկանում՝ լարային, փողային, հարվածային, ստեղնաշարային: Այս խաղի միջոցով նաև զարգանում է աշակերտի հիշողությունը, ապա խթանում է նրա ճանաչողական կարողությունները:

Հաճախ դասը վարում եմ՝ օգտագործելով այլընտրանքային նվագարաններ՝ ավազով լցված շշեր, չխկչխկաններ, գդալներ, կաթսաների կափարիչներ, բաժակներ, խաղալիք ցնցուղներ և այլն, որոնցով կատարում ենք երաժշտառիթմական վարժություններ: Աշակերտները հաճույքով և մեծ ոգևորությամբ են մասնակցում այսպիսի դասերին, հատկապես ԿԱՊԿՈՒ աշակերտները: Կազմակերպում եմ **ջրով երաժշտական նվագախումբ**, որտեղ հնչում են անտառային ձայներ: Դասարանը բաժանում եմ չորս խմբի: Մի խումբը պետք է ձողիկներով փչի ջրով բաժակների մեջ, մի խումբը խաղալիք ցնցուղից ջուր լցնի բաժակի մեջ, մի խումբը տրորի ափերի մեջ ճռճռան տոպրակները, իսկ մի խումբն էլ թռչունների ձայներով սուլիչներից շվացնի: Եվ այսպես միանգամից հնչում է ձողիկներից արձակվող ջրի քչքչոցը և տոպրակների խշշոցը, որը կարծես ծառերի տերևների սվսվոց լինի, հետո իմ հրահանգով ժամանակ առ ժամանակ հնչում են սուլիչներից ծիտիկների ձայները և վերջապես նրանց է միանում ցնցուղներից հոսող ջրի ձայնը: Հիանալի մթնոլորտ է ձևավորվում դասարանում: Այսպիսի խաղերը օգնում են աշակերտներին լինել միասնական, հետևել խմբավարին, ինչու ոչ, նաև սկիզբն է նվագախմբում գործելու կարողություններին: Երեխաների առջև բացվում է մի նոր աշխարհ, երաժշտական հնչյունների գունագեղ ձայներանգների աշխարհը, որը նպաստում է երեխաների երաժշտական ընդունակությունների զարգացմանը և խթանում հետաքրքրությունները գործիքային երաժշտության հանդեպ: Գործունեության այս տեսակը նպաստում է երաժշտական մտածողությանը, զարգացնում է երաժշտական ճաշակը, սովորեցնում է հիշել և սիրել նվագարանային երաժշտությունը: Երաժշտադիտակտիկ խաղերի միջոցով ստեղծվում է այնպիսի միջավայր, որտեղ երեխան խորացնում, ներկայացնում և միաժամանակ վերահսկում է իր կարողություններն ու գործունեությունը: Նպատակն է՝

- Օգնել երեխային ունկնդրել, տարբերել, համեմատել երաժշտական հնչյունի մի քանի արտահայտչամիջոցներ (բարձրությունը, ուժգնությունը, տևողությունը, տեմբրը):
- Նպաստել երեխայի երաժշտական լսողության օրինաչափ, համակարգված զարգացմանը:

Ճանաչենք կոմպոզիտորներին

Այսպիսի դաս կազմակերպում եմ 4-7-րդ դասարաններում: Գրատախտակին փակցնում եմ կոմպոզիտորների նկարներ, ապա ծածկում դրանք: Նախապես պատրաստած ծրարների մեջ դնում եմ կոմպոզիտորների կյանքին ու գործունեությանը վերաբերող հարցաթերթիկներ: Նախապես պատրաստում եմ աուդիոձայնարկիչը՝ կոմպոզիտորների ստեղծագործությունները լսելու համար: Դասարանը բաժանում եմ մի քանի խմբերի՝ սովորաբար 4-5: Հերթով գրատախտակին են մոտենում խմբերից մեկական աշակերտ, ծրարից հանում հարցը և պատասխանում: Ճիշտ պատասխանը մեկ միավոր է, որից հետո միացնում եմ աուդիոձայնարկիչը, և հնչում է տվյալ կոմպոզիտորի որևէ ստեղծագործությունից մեկ հատված: Եթե աշակերտը գուշակում է ստեղծագործությունը, ստանում է ևս մեկ միավոր: Այսպիսով, մեկ աշակերտը հինգ հոգանոց խմբին բերում է երկու միավոր: Այսպես շարունակվում է մինչև բոլորը պատասխանում են իրենց բաժին հասած հարցերին և գուշակում ստեղծագործությունները: Երբ տրված են բոլոր հարցերի պատասխանները, բաց եմ անում կոմպոզիտորի նկարը: Եթե աշակերտը չի պատասխանում հարցին, նրան կարող են օգնել խմբի մյուս անդամները օգնող, հուշող հարցերի միջոցով: Այսպիսի դասերը մեծացնում են հետաքրքրությունը, զարգացնում են աշակերտների ակտիվությունը, նախաձեռնությունը, ստեղծագործական կարողությունները, ձևավորում են միջանձնային հարաբերությունները անհատական և խմբակային աշխատանքի ընթացքում: Նրանց տալիս է ազատ մտածելու, արտահայտվելու և գործելու, նաև մրցակցելու հնարավորություն:

Վարելով այսպիսի դասերը՝ ես կրկին ու կրկին համոզվում եմ, որ դրանք արդյունավետ են և արդարացված: Աշակերտների համար դասը չի լինում հարց ու պատասխանի միջավայր, որը ձանձրալի է ու անհետաքրքիր, կամ վերածվում է մրցույթի, խաղի, համերգասրահի, հետազոտական միջավայրի, որն էլ ավելի հետաքրքիր է դառնում աշակերտների համար և մոտիվացնում է նրանց հաճույքով և հետաքրքրությամբ մասնակցելու դասապրոցեսին:

Դաս-մուլտսրահ. նպատակ՝

- Ձևավորել աշակերտների մեջ սեր ու հետաքրքրություն դեպի դասական երաժշտությունը:

- Դաստիարակել ունկնդրելու, համերգասրահներում ճիշտ վարքագիծ դրսևորելու կարողունակություն:

Վերջնարդյունք՝

- Կգնահատեն ու կսիրեն դասական երաժշտությունը:
- Կկարողանան ինքնուրույն վերլուծել և մեկնաբանել հանրամատչելի դասական երաժշտությունը:

Ընթացք

Նախապես դասարանը վերածում եմ կինոսրահի: Երբ աշակերտները մտնում են դասարան, իսկույն հասկանում են, որ դասը ոչ սովորական է լինելու: Ողջունում եմ նրանց ու մի փոքրիկ նախաբանով բացատրում, թե ինչ ենք դիտելու, որ օրվա դասը լինելու է մուլտ-դաս: Ակնհայտ էր աշակերտների ուրախությունն ու հետաքրքրասիրությունը: Մթնեցրի դասասենյակը, միացրի լուսացրիչը, և սկսվեց կախարդանքը: Դիտում ենք Դիսնեյան «Ֆանտազիա» մուլտ-համերգը: Այն սկսվում է նվագարանների պատրաստությունով: Լսվում են, թե ինչպես են երաժիշտները լարում իրենց նվագարանները՝ ջութակներ, տավիղ, շեփորներ, ֆլեյտաներ, թավջութակներ: Մի խոսքով՝ սիմֆոնիկ նվագախմբի բոլոր նավագարանների ձայները: Հետո մոտենում է խմբավարը և ներկայացնում ցուցադրելիք նյութը, ապա սկսվում է համերգը, որին զուգահեռ էկրանին երևում են նախ երաժիշտները, ապա հրաշալի մուլտտեսարաններ, որոնք տալիս են երեխաներին հնարավորություն երազելու, մտածելու, պատկերացնելու, ունենալու տարբեր զգացողություններ ու տրամադրություն, տեսնելու գույների աննկարագրելի պատկերներ դասական երաժշտության մեջ, առանձնացնելու հնչողությանը համապատասխանող նվագարանները: Մի խոսքով՝ իրական հեքիաթ, ֆանտազիա: Հնչում են Բախի, Չայկովսկու, Ստրավինսկու, Բեթհովենի, Մուսորգսկու, Շուբերտի հանրահայտ ստեղծագործությունները: Այսպիսի դասերի շնորհիվ երեխաները անկախ իրենց կամքից առնչվում են դասական երաժշտության հետ և ընտելանում են դրանց ունկնդրելուն, սիրով ու հաճույքով: Նույն հաջողությամբ դիտում ենք նաև Մոցարտի «Կախարդական սրինգը» օպերայի մոտիվներով նկարահանված մուլտֆիլմը, Սերգեյ Պրոկոֆևի «Պետյան և գայլը» սիմֆոնիկ հեքիաթի մոտիվներով մուլտֆիլմը: Բարձր դասարաններում կազմակերպում եմ ֆիլմերի դիտումներ, որտեղ հնչում են հանրահայտ հայ և արտասահմանյան կոմպոզիտորների ստեղծագործություններ: Ես

համարում եմ, որ այս կերպ աշակերտները ավելի լավ են հասկանում ու գնահատում դասական երաժշտությունը, այսպիսի դասերը խթանում են, որ ավելի ուշ այս թեմաներին անդրադառնալիս աշակերտները ավելի ուշադիր ու հետաքրքրությամբ ուսումնասիրեն արդեն ծանոթ ստեղծագործությունները:

Դաս-հեքիաթ. լինում են դասեր, երբ աշակերտները հեշտ չեն յուրացնում թեման, և ես փորձում եմ հորինել թեմայի հեշտ ընկալման համար հեքիաթներ: Այդպիսի դաս-հեքիաթ անցկացրի 3-րդ դասարանում:

Հնչերանգ թեմայով դասը սկզբում վարեցի ավանդական մեթոդով, որը ոչ բոլորի ներգրավվածությունը ապահովեց, կարծես ստվերում էին մնում ԿԱՊԿՈՒ աշակերտները, ոմանց մոտ ուշադրության պակաս էի նկատում: Չնայած դրան՝ դասարանի մեծ մասը ակտիվ էր և յուրացրեց թեման, և խնդիր առաջացավ դասը հասանելի դարձնել բոլորին: Երեխաներին հաղորդակից դարձնել երաժշտության կախարդական աշխարհին:

Նպատակ՝

- Պատկերացում կազմել արտահայտչական և նկարագրական ինտոնացիաների մասին:
- Ձևավորել հմտություններ ճանաչելու և տարբերակելու արտահայտչական և նկարագրական ինտոնացիաները:
- Հասկանա, թե ով է ինքը, ինչ է իր համար երաժշտությունը:

Վերջնարդյունք՝

- Կտարբերի և կհիմնավորի նկարագրական և արտահայտչական ինտոնացիաները: Սեփական օրինակով կնկարագրի և ցույց կտա դրանք:
- Կկարողանա ներկայացնել գույներով հնչերանգը և կստեղծի փոքրիկ պատմվածք:

«Ինտոնացիա» ծաղիկը

Լինում է-չի լինում մի թագավոր է լինում: Այս թագավորը շատ է սիրում երաժշտություն լսել: Իր թագավորությունում միշտ երաժշտություն է հնչում, որ կողմ նայում ես, նվագարաններ են նվագում: Մի կողմում լարայիններն են, մի կողմում՝ փողայինները, պալատի մուտքի մոտ հարվածային գործիքներն են հսկում: Ով ոտք էր դնում այս թագավորություն, բարիանում, խաղաղվում ու ներդաշնակ էր դառնում ինքն իր ու շրջապատի հետ: Այստեղ բոլորը ժպտում էին, երգում ու պարում: Հարևան թագավորության

արքան շատ էր նախանձում երաժշտության արքային և մի օր էլ որոշում է վերջ դնել նրա երջանիկ կյանքին: Իր մոտ է կանչում կախարդ Բոմոլին և հանձնարարում գտնել այդ թագավորության ներդաշնակության և խաղաղության պատճառը: Կախարդն ասում է, որ այդ թագավորությունում՝ յոթ կողպեքի հետևում է պահվում մի ծաղիկ, որի անունն է Հնչերանգ, և եթե պոկեն այդ ծաղկի թերթիկները, երաժշտության թագավորությունում ամեն ինչ քարուքանդ կլինի: Չար թագավորը հրամայում է կախարդ Բոմոլին անմիջապես գտնել բանալիները, կախարդանքով մտնել երաժշտության թագավորություն, բացել կողպեքները և պոկել, բզկտել հրաշք ծաղիկը: Շատ չարչարվելուց հետո Բոմոլին հաջողվում է գտնել բանալիները, նա ճանճ է դառնում և մտնելով թագավորություն՝ բացում է կողպեքները: Սև, մութ ամպերը փակում են երկինքն ու արևը, մի այնպիսի փոթորիկ է բարձրանում, որ տակնուվրա է անում ամբողջ թագավորությունը, իսկ ծաղկի թերթիկները մեկ-մեկ պոկվում ցաքուցրիվ են լինում: Շրջապատը գունաթափվում է, ցրտում է, ամենուր անկանոն աղմուկ ու աղաղակ է լսվում երաժշտության փոխարեն: Աղմուկն այնքան սաստիկ է լինում, որ ստիպում է բնակիչներին՝ ականջները ձեռքերով փակեն ու փախչեն շատ հեռու: Թագավորը տեսնում է, որ քանդվում է իր թագավորությունը, կանչում է իր մոտ իմաստուններին, նրանք էլ ասում են, որ միայն ամենախելացին կարող է հաղթել կախարդ Բոմոլին: Եվ քանի որ ամենաքաջն ու ամենախելացին ջութակն է լինում, կանչում են նրան և ուղարկում Բոմոլին հաղթելու: Ջութակը գտնում է կախարդին և քաջաբար սկսում է նվագել: Կախարդը ջութակի մեղմ հնչյուններից ծամածռվում է ու պահանջում, որ դադարեցնի նվագելը: Ջութակը դրա դիմաց պահանջում է ասել, թե ինչպես կարող են թագավորություն վերադարձնել մաքուր հնչողությունը: Ջութակի հնչյուններից գալարվող Բոմոլն ասում է, որ եթե գտնեն ծաղկի բոլոր թերթիկները ու պատմեն յուրաքանչյուրի կարևորության ու նշանակության մասին, ծաղիկը կվերականգնվի, ու քաղաքը նորից կլցվի մաքուր ու ճիշտ հնչողությամբ: Ջութակը հավաքում է ընկերներին՝ թավջութակին, ֆլեյտային, հոբոյին, ալտին, գոսին, թմբուկին, ու միասին գնում են «հնչերանգ» ծաղկի թերթիկները փնտրելու: Մեկ-մեկ գտնում են, պատմում ու բացատրում յուրաքանչյուր թերթիկի մասին ու հավաքում ծաղիկը: Ռիթմ, տեմպ, ձայներանգ, հնչողության ուժգնություն, հնչյունաշար, հնչյունների բարձրություն. ահա այստեղ է, որ ծաղիկը նորից

արթնանում ու դալարում է ամեն մի թերթիկի հետ և լիարժեք ու ներդաշնակ է դառնում, երբ իրենց տեղերում են լինում վերջապես բոլոր թերթիկները, և տրված են լինում բոլոր հարցերի պատասխանները: Հարևան չար թագավորը բարկությունից ու նախանձից տրաքում է, իսկ Բոմոլ կախարդի համար այդ քնքուշ երաժշտությունը վարդի փշերից էլ դաժան է ծակում, ու նա գլխիկոր փախչում է հեռու՝ սարերի հետևը: Ծագում է նորից արևը երաժշտության թագավորությունում, ծաղկում են ծառերը ամենագունեղ ծաղիկներով, ծիածանն է երևում հորիզոնում, ու բոլորը կրկին ապրում են խաղաղ ու երջանիկ ամենահիասքանչ երաժշտության ուղեկցությամբ:

Երբ պատմեցի հորինածս հեքիաթը, հանձնարարեցի երեխաներին հորինել իրենց տարբերակը հեքիաթի ավարտի: Նրանց պատասխանները բազմազան էին ու հետաքրքիր, իսկ կարևորն այն էր, որ բոլորն էլ կարողանում էին բացատրել՝ ի՞նչ է ռիթմը, տեմպը, ձայներանգը, հնչողության ուժգնությունը, հնչյունաշարը, հնչյունների բարձրությունը:

Հետո դերային խաղով ներկայացրինք հեքիաթը, որն էլ ավելի ամրապնդեց թեմայի ընկալումը: Իսկ դասի վերջում հանձնարարեցի նկարել հեքիաթից ստացած տպավորությունները: Ես հասա իմ նպատակին. դասը յուրացված էր:

Դաս-ցուցասրահ դասը կազմակերպեցի 5-րդ դասարանում: Թեման՝ Արվեստների փոխկապվածությունը և փոխազդեցությունը:

Նպատակ՝

- Ձևավորել մտածողությունը, սեփական դիրքորոշումը հայտնելու, մյուսների կարծիքը լսելու հմտությունները:
- Իմանալ երաժշտության և կերպարվեստի առանձնահատկությունները, նմանություններն ու տարբերությունները:
- Ձևավորել աշակերտների մեջ գեղագիտական ճաշակ դասին հնչող երաժշտության, ինչպես նաև ցուցադրվող կերպարվեստի գործերի միջոցով:
- Ձևավորել երևակայությունը, ստեղծագործական պատկերացումները, նպաստել ինքնաճանաչմանը և ինքնարտահայտմանը:

Վերջնարդյունք՝

- Կկարողանա կատարել վերլուծություններ, համադրումներ և եզրահանգումներ:
- Կկարողանան արտահայտվել և կլսեն իրենց ընկերների խոսքը:
- Կներկայացնեն երաժշտության և կերպարվեստի առանձնահատկությունները, նմանություններն ու տարբերությունները:
- Կճանաչեն ներկայացվող արվեստի գործիչներին:

Ընթացքը՝

Նախապես դասարանը դասին համապատասխան կահավորեցի, փակցրի տարբեր նկարիչների կտավների պատկերները՝

- Մարտիրոս Սարյանի «Հայաստան պաննո», «Արագած» («Հորովել»)
- Արա Բաղդասարյանի «Արարատ» և «Աշնանային տեսարան»
- Գրիգոր Խանջյանի «Հայոց այբուբեն» գոբելենի պատկերը
- Կառլո Սարաչենի «Ս. Սեսիլիան և հրեշտակը»
- Ժան-Բատիստ Օուդրի «Ձութակով նատյուրմորտ»
- Կարավաջո «Վինահարը»

Դասարանը վերածեցի պատկերասրահի: Աուդիոձայնարկիչով պատրաստել էի յուրաքանչյուր կտավին համապատասխանող երաժշտություն: Երբ աշակերտները մտան դասարան, ես նրանց հայացքներից հասկացա, որ զարմացած են ու հետաքրքրված: Նրանց ողջունելուց հետո հարցրի, թե ինչի՞ է նման դասարանը: Հնչեցին պատասխաններ՝ ոչ սովորական դասարանի, պատկերասրահի, ցուցահանդեսի, թանգարանի և այլն: Նրանց ասացի, որ այդ օրը իրենց առջև խնդիր է դրված. պետք է պատկերացնեն, որ պատկերասրահում են, բայց ուղղակի նայելու չեն եկել, այլ որպես լրագրողներ և դիտումից հետո պետք է գրեն ցուցահանդեսի կամ որևէ առանձին կտավի մասին հոդված, որտեղ պետք է ներկայացնեն իրենց զգացողությունները, տպավորությունները, հույզերը կամ գրեն պատմություն տեսածի և տպավորությունների մասին: Աշակերտներին ասացի, որ այս ոչ սովորական դաս-ցուցասրահի ընթացքում հնչելու են նաև հայտնի կոմպոզիտորների շատ հայտնի ստեղծագործություններ և այստեղից էլ բխում է ցուցահանդեսի վերնագիրը՝ «Կարո՞ղ ենք արդյոք «լսել» նկարը»: Հարցրի՝ ինչպես կգրեն հոդվածը, ինչ պետք է նախ անեն, որ գրածը կիրթ լինի: Պատասխանեցին, որ նախ կլինեն ցուցահանդեսում, կստանան

ինֆորմացիա նկարների մասին՝ ո՞վ է հեղինակը, ո՞ր դարաշրջանում է նկարել: Երբ ամեն ինչ պարզ էր աշակերտների համար, առաջարկեցի փակել աչքերը, որպեսզի միասին գնանք ոչ սովորական ճանապարհորդության՝ երաժշտական: Միացրի երաժշտությունը: Մեկ անգամ ունկնդրելուց հետո միացրի երկրորդ անգամ, և այս անգամ աշակերտները պետք է ասեին, թե ո՞ր կտավին է համապատասխանում իրենց լսած ստեղծագործությունը:

Լսեցինք

- Անտոնիո Վիվալդի «Տաևվա եղանակներ»-ից հատված
- Վին նվագարանի հնչողությամբ «Սարատելո» իտալական ժողովրդական պարային երաժշտությունը
- Աշոտ Սաթյանի «Ես իմ անուշ Հայաստանի» երգը
- Կոմիտասի «Կալի երգ»-ը
- Ղազարոս Սարյանի «Հայաստան» պաննոյից հատվածներ
- Ռ. Պետրոսյանի «Պատգամ որդուս» երգը

Ամեն անգամ երաժշտությունը լսելիս աշակերտները հայացքով փնտրում են համապատասխան նկարը, ապա երաժշտությունը ավարտելուց հետո պատմում իրենց տպավորությունները, խոսում էին իրենց զգացմունքների մասին, պատասխանում դասընկերների տված հարցերին: Ես էլ տվեցի ստուգող հարցեր՝

- Ի՞նչ կերպարներ, պատկերներ եք պատկերացնում Արամ Խաչատրյանի «Ջութակի կոնցերտ»-ը լսելիս:
- Սիմֆոնիկ ի՞նչ ստեղծագործություններ գիտեք, որոնք գրված են գրական տեքստի հիման վրա:
- Հայ կոմպոզիտորների ի՞նչ ստեղծագործություններ գիտեք, որոնք հորինված են կերպարվեստի ազդեցությամբ:
- Պատմեք Մ. Սարյանի և Կոմիտասի ստեղծագործություններից ստացած ձեր տպավորությունները:
- Ովքե՞ր են «Ես իմ անուշ Հայաստանի», «Պատգամ որդուս» երգերի հեղինակները:

Դասի վերջում դասարանը բաժանեցի չորս խմբի և հանձնարարեցի գրել հոդված: Յուրաքանչյուր խմբի համար որոշեցինք հետևյալ վերնագրերը՝

1. «Ես և իմ երաժշտական աշխարհը»
2. «Ես լսում եմ նկարը»
3. «Ես տեսնում եմ երաժշտությունը»

4. Այս խմբում ներգրավեցի նկարող երեխաներին և հանձնարարեցի նկարել «երաժշտական աֆիշ» մեր ցուցահանդեսի թեմայով:

*«Աշխատանքի ժամանակ ես միշտ երգում եմ, երբեմն հենց այնպես ինչ-որ բան, իսկ ժամանակ առ ժամանակ՝ ժողովրդական երգ կամ օպերայի արիա: Երգելն օգնում է, ստեղծում ներքին կենտրոնացում, հատուկ տրամադրություն, ռիթմ: Սա, իհարկե, շատ անհատական է, բայց այսպես է լինում համարյա միշտ: Չէ, հնարավոր չէ ապրել առանց երաժշտության». **Մ. Սարյան**:*

Նորից ու նորից համոզվում եմ, որ այլընտրանքային ճանապարհներով դասապրոցեսը իրեն արդարացնում է, դասարանի զգալի մասը ակտիվ էր բոլոր հարցադրումներում, նրանք մտել էին դերի մեջ և իրենց լրագրողներ էին կարծում, որն էլ տվել էր իրենց մոտիվացիա: Ովքեր շատ չէին խոսում, միևնույն է հետաքրքրվում էին դասով, զննում էին նկարներ, ունկնդրում երաժշտությունը, այս աշակերտները հատկապես ակտիվ էին երաժշտությունն ու նկարները համեմատելու, ինչպես նաև իրենց զգացմունքները արտահայտելու ժամանակ: Դասը անցավ հագեցած ու հետաքրքիր: Ես հասա իմ նպատակին և վերջնարդյունքում ստացա այն, ինչ ի սկզբանե նախատեսել էի:

Դաս-ծիսակատարություն

Դասը կայացրել եմ ծեսեր և ծիսական երգեր թեմայի ամփոփմանը:

Նպատակը՝

- Ճանաչեն ու մեկնաբանեն ազգային ծեսերը:
- Իմանան ու գեղեցիկ կատարեն ծիսական երգերը:
- Երգելուն զուգահեռ կարողանան ճիշտ մեկնաբանելով կատարել պարային շարժումներ:

Վերջնարդյունք՝

- Կներկայացնեն ազգային ծեսերը, դրանց ծագումն ու պատմությունը:
- Կիմանան ու կմեկնաբանեն ծիսական երգերը, կկարողանան պարել ազգային պարեր:
- Կձևավորվի ազգային ավանդույթները կրող ու պահպանող, ազգային մշակույթը սերունդներին փոխանցող հասարակություն:

Դասը ներկայացվել է 4-րդ դասարանում ծեսեր և ծիսական երգերի թեմայի ամփոփմանը: Նախորդ դասին դասարանը բաժանեցի չորս խմբի, յուրաքանչյուր խմբի հանձնարարեցի ուսումնասիրել որևէ ծես, կրկնել տվյալ ծեսին համապատասխանող երգն ու պարերը, պատրաստել ծեսին

համապատասխանող դեկորացիա և պատրաստել ավանդական կերակրատեսակներ: Դասն առավել հետաքրքիր դարձնելու և աշակերտներին մոտիվացնելու համար խնդրեցի տնօրինությանը ներկա գտնվել և ներկայանալ որպես ժյուրի, իսկ լավագույն խմբին սպասվում էին անակնկալ նվերներ: Առաջին խմբին հանձնարարվեց ներկայացնել «Բարեկենդան»-ը, երկրորդին՝ «Սուրբ Հարության տոնը», երրորդին՝ «Համբարձման տոնը», չորրորդին՝ «Տյառնընդառաջը»: Դասը կայացավ դասընթացից դուրս՝ դասերից հետո, որպեսզի յուրաքանչյուր խումբ կարողանար հավուր պատշաճի ձևավորել իրեն հատկացված տարածքը: Դասարանը վերածվեց մի իսկական թատերաբեմի: Աշակերտները մանրակրկիտ պատրաստվել էին: Խմբերը նաև ներկայացրին ծեսը, ապա կատարեցին համապատասխան երգերն ու պարերը: Յուրաքանչյուր խումբ պատրաստել էր երեք համար (երկու երգ, մեկ պար): Շատ հետաքրքիր ու գեղեցիկ ներկայացրին ծեսերը, հյուրասիրեցին մեկմեկու և հյուրերին՝ իրենց ձեռքով պատրաստած ավանդական անուշեղենները: Ուրախությունն ու ավանդական երգն ու պարը մի իսկական տոնակատարության էին վերածվել: Դասի ավարտին արդյունավետ աշխատանքը ակնհայտ էր:

Այսպիսի դասերի միջոցով զարգանում է երեխաների գեղագիտական ճաշակը, նրանք դառնում են ավելի ինքնուրույն, մեծանում է աշակերտների աշխարհայացքը, խմբում աշխատելու, մեկը մյուսի կարծիքը լսելու, քննարկելու, փոխհամաձայնության գալու կարողունակությունները, աշակերտները դառնում են ավելի վստահ և նախաձեռնող, ստեղծագործող, ապրումակցող:

Ամփոփում

Այսպիսով, ես կարծում եմ, որ ստեղծագործական և հետազոտական աշխատանքները երաժշտության դասին այլընտրանքային ճանապարհներով տալիս են իրենց դրական արդյունքը և արդյունավետ են: Իմ փորձից ես կարող եմ ասել, որ այդպիսի դասերից հետո զարգանում է աշակերտների գեղագիտական վերաբերմունքը կյանքի երևույթների և արվեստի, ազգային մշակույթի նպատմամբ: Չէ՞ որ բնությունը և մարդկային ապրումները երաժշտության ոգեշնչման աղբյուր են: Այսպիսի ուսուցման ձևերը անցում են մի այլ հոգեբանական վիճակի՝ կյանքի մեկ այլ շփման ոճ, դրական զգացմունքներ, նոր իրավիճակում գտնվելու զգացողություն և, ուրեմն, նոր պարտականություններ և պատասխանատվություն: Այսպիսի դասերի շնորհիվ իմ դասավանդած դասը դառնում է բազմաբնույթ և բազմազան, որոնք օգնում են ակտիվացնել աշակերտների մտածելու կարողունակությունները, զարգացնում են նրանց ստեղծագործական կարողունակությունները, ինքնուրույն գործելու ունակությունները: Այսպիսի դասերով բարձրացնում եմ աշակերտների հետաքրքրությունը առարկայի նկատմամբ: Զարգանում է նրանց ինքնուրույնությունը, սովորում են աշխատել ամենատարբեր ոչ սովորական ուսումնական աղբյուրներից: Աշակերտների առջև բացվում են նոր հնարավորություններ հմտությունների ու կարողությունների արագ դրսևորման, արտահայտման կարճ և ճիշտ հետևություններով: Այսպիսի դասերը ակտիվացնում են աշակերտներին: Այլընտրանքային ճանապարհներով դասերի ընթացքում աշակերտները, շփվելով իրար հետ, ստանում են դրական էմոցիաներ, իրենց տեսնում եմ մի այլ հարթության մեջ, որից էլ բխում է նոր պատասխանատվության և պարտականության զգացողությունը: Իմ կարծիքով՝ այս դասերը նոր ստեղծագործական կարողունակություններ արտահայտելու միջոց են, որոնց միջոցով աշակերտները սկսում են ինքնուրույն գործել և դառնում են ավելի միասնական: Բարձրանում է դասի որակը, և հազիվ թե գտնվի աշակերտ, ով չի ցանկանա մասնակցել այսպիսի դասերին:

Գրականության ցանկ

1. Ամիրջանյան. Յու Ա, Սահակյան Ա.Ս. «Մանկավարժություն», Երևան, 2005
2. «Երաժշտության պարապմունքներ» ուսումնամեթոդական ձեռնարկ, 2015
3. Հովարդ Գարդներ. «Գիտակցության կառուցվածքը», 1983
4. Ջ. Ռոդարի. «Ստեղծագործական երևակայության քերականություն»
5. Ուսուցման ժամանակակից մեթոդներ, հնարներ, վարժություններ: Մեթոդական ձեռնարկ, 2008
6. Анохина Вера Алексеевна “Традиционные и нетрадиционные уроки по музыке: организацияб содержаниеб технологии, диагностика”
7. Мухин М.И. Гуманистические традиции и новаторство в педагогическом опыте В.А. Сухомлинского, 1995
8. Hovard Gardner “Multiple intellgences the thedry in practice”, 1993